# community

The New Apostolic Church around the world

04/2017/AM

## 2017-ի Հոգեզալուստը Վիեննայում / Ավստրիա

Խմբագրական՝ Նրա փառահեղությունը տեղեկացնել

Հոգեզալստյան ժամերգություն՝ Սուրբ Հոգու շնորհների ազդեցությունները

Եկեղեցական ուսմունք՝ Ննջեցյալների գոյությունը

New Apostolic Church
International

# Նրա փառահեղությունը տեղեկացնել

Լուսանկարը՝ ՆԵԵ միջազգային

Սիրելի հավատացյալ քույր-եղբայրներ,

Տարվա նշանաբանը՝ “Փառք Աստծուն՝ մեր Հորը”, ուղեկցում է մեզ ամբողջ տարվա ընթացքում, այո, մեր ամբողջ կյանքում: Քրիստոնյաների առաջադրանքն է ու նրանց համար անհրաժեշտություն՝ միշտ աստվածային արարչագործության մեծությունը ճանաչելը, Աստծուն դրա համար շնորհակալություն հայտնելը և նրան գովաբանելը:

Այն դեպքում, երբ մենք ամեն ինչ որպես արարչագործություն ենք ճանաչում, պետք է այդ ճանաչողությունից ելնելով էլ Աստծուն՝ Արարչին շնորհակալ լինենք և գովաբանենք: Իսկ հետո, առաջ է գալիս նաև երրորդ փափագը՝ նրա փառահեղությունը տեղեկացնելը:

Իսկ ինչպե՞ս ենք մենք դա անում մեր կյանքում.

նրանով, որ մենք մեզ պահում ենք ինչպես Աստծո զավակներ: Եկեք բացահայտենք, թե ինչ ենք մենք ճանաչել և ինչի համար ենք շնորհակալ:

- Մենք ներում ենք մերձավորին - քանի որ Աստված ներում է մեզ:
- Մենք փրկություն ենք խնդրում - բոլոր մարդկանց համար, նաև նրանց, ովքեր վիրավորել են մեզ:
- Մենք լիովին վստահ ենք, որ Աստծուն ոչինչ չի խանգարի մեզ իր թագավորությունը տանելու:
- Մենք զարգացնում ենք մեզ- Աստված մեր մեջ կյանք դրեց, որը պետք է զարգանա:
- Մենք կազմում ենք մի միություն - այն գիտակցությամբ, որ բոլոր մարդիկ ունեն միայն մեկ Աստված և Հայր:
- Մենք կողմնորոշվում ենք հանուն հավերժական կյանքի՝ Աստծո ժառանգության: Դա ամենակարևորն է մեր կյանքում:

Եթե յուրաքանչյուրը այս մտքերով գործի, դրանից օրինանք կբխի- մեզ համար և մերձավորի համար:

Սրտագին ողջույններ՝

Ձեր՝ Ժան-Լյուք Շնայդեր

# Սուրբ Հոգու շնորհների ազդեցությունները

Ժամերգության 2000 մասնակիցներ Վիեննայի համերգասրահում / Ավստրիա/ և հարյուր հազարավորներ աշխարհի բազմաթիվ համայնքներում՝ ժամերգությունը հեռարձակվում էր բոլոր մայրցամաքներում

Լուսանկարը՝ Օլիվեր Դյութենի

Գործք առաքելոց 2,4

,, Եվ բոլորը լցվեցին Սուրբ Հոգով և սկսեցին խոսել ուրիշ լեզուներով, ինչպես որ Սուրբ Հոգին նրանց խոսել էր տալիս,,:

Սիրելի քույր-եղբայրներ, այս Հոգեգալստյան տոնին, ինչպես արդեն սովոր ենք, լսելու ենք աստվածաշնչյան ընթերցում: Այսօր լսելու ենք մի հատված Պողոս առաքյալի հռոմեացիներին ուղղված նամակից:

Ընթերցում հռոմեացիներին ուղղված նամակից՝ 8,9-11;14-17

,, Բայց դուք մարմնի իշխանության տակ չեք, այլ՝ հոգու, եթե Աստված Հոգին բնակեցրել է ձեր մեջ: Ապա եթե մեկը Քրիստոսի Հոգին չունի, նա նրան չի պատկանում: Իսկ եթե Քրիստոս ձեր մեջ է, ապա մարմինը մեռած է մեղքի համար, և հոգին կենդանի է արդարության համար: Եթե ձեր մեջ

բնակվում է Նրա Հոգին, ով հարություն տվեց Հիսուսին մեռելներից, ապա և ով հարություն տվեց Քրիստոսին մեռելներից, կկենդանացնի ձեր մահկանացու մարմինները ձեր մեջ բնակվող իր Հոգով:/…/Որովհետև նրանք, որ առաջնորդվում են Աստծու Հոգով, նրանք են Աստծու որդիները. քանի որ չստացաք ծառայության Հոգին վերստին երկյուղի մեջ ընկնելու համար, այլ ստացաք որդեգրության Հոգին, որով աղաղակում ենք՝ Աբբա, Հայր: Նույն ինքը Հոգին վկայում է մեր հոգուն, թե Աստծու որդիներ ենք, և եթե որդիներ ենք, ապա և՝ ժառանգներ, ժառանգներ Աստծու և ժառանգակիցներ Քրիստոսի, եթե իր չարչարանքների կցորդն ենք, հաղորդակից ենք լինելու և փառքին,,:

Սիրելի քույր-եղբայրներ, այսօր մենք տոնում ենք մի տոն, որը մեզ համար առանձնահատուկ նշանակություն ունի: Հոգեգալստյան տոնը Քրիստոսի եկեղեցու հիմնական տոնն է: Մենք գիտենք, որ Հոգեգալստյանը առաքյալներն ու բոլոր աշակերտները, որոնք նրանց հետ հավաքվել էին, լցվեցին Սուրբ Հոգով: Դա իրականացումն էր այն խոստման, որ Հիսուսը տվել էր նրանց: Սուրբ Հոգին պատեց նրանց, և նրանք բոլորը սկսեցին խոսել ուրիշ լեզուներով, որպեսզի շատ հրեաների, որոնք եկել էին աշխարհի բոլոր ծայրերից, քարոզեն Ավետարանը:

Մարդիկ, ովքեր ավելի ուշ Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատքի եկան, ընդունեցին Սուրբ Հոգին՝ առաքյալների աղոթքով և գլուխների վրա ձեռքերի դրմամբ: Աստվածաշունչը տեղեկացնում է առանձին դեպքերի մասին, որ Սուրբ Հոգու շնորհների հետ միասին նաև այլ շնորհներ էլ են հաղորդվել: Մի քանիսը ստացել են լավ խոսելու շնորհ, մյուսները՝ հիվանդների բժշկելու շնորհ, ուրիշները՝ գուշակության շնորհ: Աստված ուզում էր դրանով ցույց տալ, որ իր առաքյալները Հիսուսի կողմից առաքվածներ են: Այս նշանները նպաստում են, որ հավատը առաքյալների ուղարկվածության հանդեպ ամրանա: Իր իմաստությամբ Պողոս առաքյալը հստակեցրեց, որ այս շնորհները փրկության երաշխիքներ չեն: Փրկության համար վճռական է վերստին ծնվելը ջրով և Հոգով, և նոր արարածի զարգացումը Հիսուս Քրիստոսով, վճռականը շնորհները չեն:

Որպես նորառաքելական քրիստոնյաներ հավատում ենք, որ մենք Սուրբ Հոգու շնորհները առաքյալի աղոթքով և ձեռքերը գլխին դնելով ենք ստանում: Դա մեր հավատի ամուր բաղադրիչն է և այդպես է գրված մեր հավատամքի ութերորդ դրույթում:

Սուրբ կնունքով մենք ստանում ենք Սուրբ Հոգու շնորհները և դրանով ստանում Աստծո որդիներ կոչվելու իրավունքը: Դա չի նշանակում, որ մնացած մարդիկ չեն կարող լինել Աստծո զավակներ: Աստված Հայրն է բոլոր մարդկանց, քանի որ նա է նրանց ստեղծել: Յուրաքանչյուր քրիստոնյա իրավունք ունի Աստծուն իր երկնային Հայրն անվանելու, ով նրան սիրում է, ով նրա մասին հոգում է, և ով նրան փրկություն է նվիրում: Ուրեմն՝ թող այն միտքը մեզնից հեռու լինի, որ միայն մենք ենք Աստծո զավակներ, իսկ մյուսները՝ ոչ: ,, Աստծո զավակներ,, հասկացությունը խոսում է ինչ որ առանձնահատկության մասին՝ առանձնահատուկ վերաբերմունք Աստծո հանդեպ և առանձնահատուկ կանչ: Սուրբ Հոգու շնորհներով մենք նախապայմանն ենք ունենում առաջնեկներ դառնալու և որպես առաջնեկ Աստծո թագավորությունը գնալու, որպեսզի այնտեղ Աստծո ժառանգները և Քրիստոսի ժառանգակիցները լինենք: Սա է նշանակությունը Աստծո զավակ հասկացության: Մենք կանչված ենք առաջեկներ դառնալու, որպես առաջինը Աստծո թագավորություն մուտք գործելու: Պարզ է, որ, որտեղ առաջիններն են, այնտեղ կան նաև ուրիշներ, ովքեր հետո են գալու: Աստված ուզում է բոլոր մարդկանց նոր արարչագործությունում իր հետ միասնությունը նվիրել: Դա էի ես ցանկանում նորից պարզաբանել:

> Հավատը նախապայմանն է այն բանի համար, որ Սուրբ Հոգու շնորհները իրենց ազդեցությունը ծավալել կարողանան:.

Մենք ամուր հավատ ունենք Սուրբ Հոգով կնքվելու հանդեպ, մենք հաստատ հավատում ենք, որ մենք ընդունել ենք Սուրբ Հոգու շնորհները: Սիրելի քույր-եղբայրներ, ես իմ առաջադրանքն եմ տեսնում սրա վրա աշխատելու, այդ հավատը ամրացնելու համար, որ մենք հետագայում էլ հավատանք Սուրբ Հոգով կնունքի ժամանակ Սուրբ Հոգու շնորհները ստանալուն, քանի որ հենց այդ հավատն է նախապայմանը նրա համար, որ Սուրբ Հոգու շնորհները իրենց ազդեցությունը կարող են ծավալել: Եթե այնպես լինի, որ այդ հավատը

պակասի, կարող են Սուրբ Հոգու շնորհները այլևս լիովին ազդեցություն չունենալ: Դրա համար էլ շատ կարևոր է, որ մենք ամուր հավատ ունենանք Սուրբ Հոգով մեր սեփական կնունքի հանդեպ:

Ինչպե՞ս է ներգործում Սուրբ Հոգին: Պողոսն այդ մասին գրել է, որ, որտեղ հավատը Սուրբ Հոգու շնորհների նկատմամբ առկա է, թույլ են տալիս ղեկավարվելու Սուրբ Հոգով, նա ինչ որ բան ունի ասելու մեր սրտում: Ապա Աստծու Ոգին ասում է մեզ, դու Աստծու զավակ ես, դու ունես մի Հայր, ով սիրում է քեզ, դու ունես մի Հայր, ով ուզում է քեզ որպես առաջնեկ իր թագավորությունը տանել: Ով թույլ է տալիս իրեն ղեկավարվելու Սուրբ Հոգու կողմից, ասում է ինչպես Պողոսը՝ ,, Աբբա, սիրելի Հայր,,: Դա նշանակում է, որ նա հավատում է, որ Հայրը հոգ է տանում իր համար, ինչպես հոգ էր տանում իր Որդու համար, երբ նա երկրի վրա էր: Հայրն այն բանի համար է հոգում, որ Հիսուս Քրիստոսն իր առաջադրանքը իրականացնել և ապա նրա հետ միասնության վերադառնալ կարողանար:

Մենք էլ ենք ասում՝ ,, Աբբա, սիրելի Հայր,, դու, Ամենազորդ, իմ Հայրն ես: Դու հոգալու ես այն բանի համար, որ ամեն ինչ լավ լինի և ես կարողանամ քեզ հետ հավերժ միասնություն կազմել: Սուրբ Հոգին ասում է մեր հոգուն՝ հանգիստ մնա, քո Հայրը հոգում է քեզ համար: Դա մեզ անդորրություն, շրջահայացություն է տալիս, որը հիմնված է մեր հավատի վրա:

Պողոսն ասում էր.,, Նախատում էին մեզ՝ օրհնում էինք, հալածում էին՝ դիմանում էինք,, / 1. Կորնթ 4,12/: Այդ անդորրությունը, որ այնքան պակասում է մեր այս ժամանակներում, Սուրբ Հոգու շնորհների ազդեցություններից է: Հայրը այստեղ է, նա հոգում է քեզ համար: Դա Սուրբ Հոգու շնորհների առաջին ազդեցությունն է:

Ով ունի այդ շնորհը, հավատում է դրան և թույլ է տալիս իր վրա ներգործել, նաև առաջնորդվում է դեպի Աստծո փառահեղության ճանաչողություն: Սուրբ Հոգու միջոցով նրան հայտնվում է Աստծո փառահեղությունը: Ով ուզում է Աստծո փառահեղությունը ճանաչել անցյալում, ներկայում և ապագայում, նա խոսում է այլ լեզվով: Նա կարող է ճանաչել, թե Աստված անցյալում ինչ է արել: Նա այլևս չի կենտրոնանում այն բանի վրա, թե մարդիկ անցյալում իր հետ ինչ են արել: Նա շատ չի խոսում այն մասին, ինչի նա հասել է: Ճանաչելով Աստծո փառահեղությունը՝ նա գիտի նու ասում է.,,Աստված մեծ բան է արել ինձ համար, եկեք ուրախանանք և ուրախ լինենք,,: Նա լի է շնորհակալությամբ, քանի որ կարողանում է Աստծո ներգործությունը անցյալում ճանաչել: Որտեղ Սուրբ Հոգու շնորհները կարողանում են ծավալվել, ի հայտ է գալիս շնորհակալությունը:

Ում մոտ Սուրբ Հոգու շնորհները կարողանում են ծավալվել, նա կարողանում է ներկայի վտանգները ճանաչել: Նա հաստատ գիտի, որ ամենամեծ վտանգը կայանում է նրանում, որ իրադարձությունները, ինչպես քննությունները նրան հեռացնում են Աստծուց: Նրա համար առաջնային է՝ ինչ էլ որ ստիպված լինի ապրելու, չի ուզենա Աստծուց բաժանվել: ՉԻ ուզում ոչ մի քայլ Հիսուսից հեռանալ: Նա ունի առաջնայնություն: Դրա համար էլ նա ներկան իր վտանգներով բոլորովին այլ կերպ է արժևորում : Նրա մտահոգությունն է Աստծո հետ միասնության մեջ մնալը և ներքնապես ձևավորվելը: Այդ դեպքում ի հայտ է գալիս զգոնությունը, որը Սուրբ Հոգու շնորհներից մեկն է:

## Շնորհակալություն անցյալի, ներկայի զգոնության և ապագայի ուրախության համար:

Ով իրեն ղեկավարել է տալիս Աստծո կողմից, գործ է ունենում Աստծո փառահեղության հետ ապագայի

Քարոզի կանչվեցին շրջանային առաքյալներ Բերնդ Քոբերշթայնը Գերմանիայից / ձախում/ և Ջոն Լ. Քրիլը՝ Հարավային Աֆրիկայից / աջում/

Սիրելի քույր-եղբայրներ, ես ցանկանում եմ այս առումով մի հղում անել՝ եկեք Ավետարանը մերձավորին տեղեկացնենք նրանով, որ խոսենք նրա լեզվով, ոչ թե՝ մեր: Դա կապ չունի անգլերենի. ֆրանսերենի, իսպաներենի, ռուսերենի կամ գերմաներենի հետ: Մենք մի մեծ օրինակ ունենք, դա Աստծո Որդին է: Նա ուզում էր մարդկանց ուրախ լուրը հայտնել: Նա դա արեց ոչ երկնքից: Մա մարդացավ և մարդկանց հետ բախտակից եղավ, ապրեց, ինչպես նրանք էին ապրում, տառապեց, ինչպես նրանք էին տառապում, նրանց հետ ամեն ինչ կիսեց, նրանց շատ մոտ գտնվեց: Նա կարողացավ իր լեզվով խոսել, քանի որ նա դարձավ նրանց նման, իսկապես ճշմարիտ մարդ:

Որպեսզի լեզու սովորեն, նախ պետք է լսեն: Այսօր դա մարդիկ լիովին մոռացել են: Յուրաքանչյուրն ուզում է խոսել: Բայց խոսքը ավելիի մասին է: Մենք պետք է մեր մերձավորին ոչ միայն լսենք, մենք պետք է նրանք կարեկցենք, նրա վախը, նրա տառապանքը կամ նրա ուրախությունը պետք է կիսենք, որպեսզի նա նկատի ու ասի՝ նա ինձնով հետաքրքրվում է: Այդ կարեկցանքը բացում է նրա սիրտը և ընդունելի է դարձնում նրա համար մեր լուրը, ուրախ լուրը՝ Աստված քեզ սիրում է, նա ուզում է քեզ փրկել: Մենք գտել ենք Հիսուս Քրիստոսին, արի մեզ հետ, նա ներկա է նաև քեզ համար: Կարեկցանքի այս կետը շատ կարևոր է: Եկեք խոսենք մերձավորի լեզվով, քանի որ մենք ուզում ենք փրկությունը նրա հետ կիսել:

Եվս մի շատ կարևոր կետ. մենք ուզում ենք, որ նաև հաջորդ սերունդները, մեր երեխաները, մեր երիտասարդությունը փրկության արժանանան: Մեր երեխաներից շատերը կնքվել են, երբ նրանք դեռ շատ փոքր էին: Մեր հավատի համոզմունքն է, որ երեխան Սուրբ Հոգով կնունքի ժամանակ ընդունել է Սուրբ Հոգու շնորհները: Բայց, մենք բոլորս գիտենք, որ այդպես չի լինում: Որպեսզի Սուրբ Հոգու շնորհներն իրենց ներգործությունը ծավալել կարողանան, պետք է երեխայի, երիտասարդի մոտ հավատն աճի: Պետք է հավատալ այն բանին, որ Սուրբ Հոգու շնորհները ընդունել են և, որ դա մի անգամ տեղի ունեցող, հրաշալի բան է: Եվ այստեղ է խնդիրը:

Մեր երեխաների, մեր երիտասարդների մի մասի մոտ հետևյալ կարծիքն է՝ այո, ես պատկանում եմ Նորառաքելական եկեղեցուն: Սակայն հավատը Սուրբ Հոգու շնորհների վերաբերյալ ոչ միշտ է առկա լինում, և մեր երիտասարդների մի մասը համար, նա լի է ուրախությամբ: Նա գիտի, թե ինչ է սպասվում իրեն: Նա գիտի, թե ինչ էտեղի ունենալու և ուրախանում է դրա համար: Դա բոլորովին այլ լեզու է, քան նրանք, որ լսում ենք մեր շրջապատում:

Պողոսը նաև պարզաբանում է, որ Սուրբ Հոգու շնորհներով Աստծո սերն է լցվում մեր սրտերը, այլ կերպ ասած՝ այնպես սիրելու ունակությունը, ինչպես սիրում է Հիսուս Քրիստոսը: Դա կապված է նաև մեր անձնական կամքի հետ, քանի որ մենք ազատ մարդիկ ենք: Եթե դու ուզում ես, ապա դու կարող ես: Դա ուրախ լուր է: Սուրբ Հոգու շնորհների միջոցով ստանում ես ունակություն՝ սիրել այնպես, ինչպես Հիսուս Քրիստոսը: Դա բխում է քո կամքից:

Այդ սերը ներգործում է: Այլոց թվում, նա ազդում է, որ մենք ձգտենք մյուսներին էլ փրկությունը տեղեկացնել: Քանի որ մենք սիրում ենք ուրիշին, ուզում ենք, որ նա էլ, ինչքան հնարավոր է, Աստծո հետ հավերժ միասնության հասնի: Մենք ուզում ենք նրա հետ կիսել ամենամեծ գանձը, որ ունենք՝ Հիսուս Քրիստոսին: Դրա համար մենք պետք է նրա լեզվով խոսենք, ինչպես անում էին աշակերտները այն ժամանակ Հոգեգալստյանը: Ընդունած շնորհներով Աստված նրանց հնարավորություն տվեց այլ լեզուներով Ավետարանը տեղեկացնել, նրանց լեզուներով, ովքեր եկել էին Երուսաղեմ:

Սուրբ Հաղորդության տոնակատարության համար նշխարամանը բացեց շրջանային առաքյալ Մարկուս Ֆեհլբաումը

կոնֆիրմացիայից հետք պարզապես հեռանում է, քանի որ նրանք չեն կարողանում ճանաչել շնորհների արժեքը: Սիրելի քույր-եղբայրներ, այստեղ հարց է առաջանում. ինչպե՞ս կարող ենք նրանց իրենց լեզվով բացատրել, թե ինչ կարևոր և ազդեցիկ են Սուրբ Հոգու շնորհները, որոնք նրանք ունեն:

Օգուտ չի տա այն, եթե մենք վատաբանենք ներկան և աշխարհը, ու նրանց բացատրել ուզենանք, թե ինչ վատն է կյանքը այս երկրի վրա-բայց, եթե դու մնում ես լավ նորառաքելական, կարող ես այդ ամենից հեռու նմալ: Բացարձակ օգուտ չէ,նրանց աշխարհակործան ապագա նկարագելը և ասել. եթե դու հավատարիմ չես, քեզ շատ վատ բան կպատահի: Օգուտ չէ նաև նրանց պահվածքի մասին դրույթներ տալը,ասելով՝ դու պետք է այս անես, դու չպետք է սա չանես: Դա բոլորովին նրանց լեզուն չէ: Ես վստահ չեմ, թե դա կարող երբևէ որևէ մեկի լեզուն լինել: Մենք հետաքրքրվում ենք ներկայով: Շրջանային առաքյալների և առաքյալների հետ միասին բազմաթիվ մտքերի ենք հանգել, թե ինչպես կարելի մեր երեխաներին իրենց իսկ լեզվով տեղեկացնել Ավետարանը: Ինչպես կարող ենք մենք նրանց բացատրել, որ Սուրբ Հոգու շնորհները կարևոր են: Ես դառնում եմ սկզբի իմ ասածին և կրկնում՝ նրանով, որ մենք նրանց տեղեկացնենք, որ նրանք Սուրբ Հոգու շնորհների ազդեցության շնորհիվ են կարողանում այդ անդորրությունն ունենալ, ներքնապես՝ ուժեղանալ: Դրա համար պարտադիր չէ, որ նրանք լավագույն կյանք ունենան և ամեն չարից ու չարիքից պաշտպանված մնան: Նրանք պետք է, ինչպես և մենք, շատ բաներից հրաժարվեն: Սակայն, նրանց կյանքը բոլորովին այլ է, քանի որ նրանք չեն տիրապետում հավատից եկող շրջահայացությանը և ներքնապես ուժեղ մարդ չեն: Դա է մոտիվացնում մեր երիտասարդությանը: Եթե մենք նրանց բացատրել կարողանանք, որ Սուրբ Հոգու շնորհներով նրանք հնարավորություն, ունակություն ունեն բոլորին սիրելու՝ առանց տատանման, նախապայմանների. դու պետք է միայն ուզենաս, այդ դեպքում դու կարող ես: Դա կմոտիվացնի երիտասարդներին, դրանում ես համոզված եմ: Նրանք կմոտիվացվեն, եթե մենք նրանց բացատրել կարողանանք. Սուրբ Հոգու շնորհներով դու ունես հնարավորություն Հիսուս Քրիստոսի հետ գործելու և օժանդակելու, որ բոլոր մարդիկ Հիսուս Քրիստոսով փրկության հասնեն: Քո կարիքը կա և դու կանչված ես՝ նպաստելու մարդկանց փրկությանը, դու կարող ես շատերի համար օրինանք լինել:

Այսպես պետք է մենք Ավետարանը՝ ուրախ լուրը երիտասարդներին, երեխաներին մատուցենք: Միայն քարոզելն ու խոսելը բավական չեն, դա ոչ մեկին չի համոզում: Մենք պետք է դա նախապես ապրենք: Ընդունու՞մ են մեր երեխաները – ես ինքս ինձ էլ նկատի ունեմ-որ մենք տիրապետում ենք այդ շրջահայացությանն ու անդորրությանը: Կարո՞ղ են երիտասարդներն ընդունել, որ մենք իսկապես կարող ենք բոլորին սիրել, եթե մենք դա ուզենանք: Կարո՞ղ են նրանք զգալ, որ մենք պահանջն ունենք մյուսներին էլ փրկություն առաջարկելու, որ մենք ցանկություն ունենք, որ բոլոր մարդիկ Հիսուս Քրիստոսին գտնեն: Սա մեր առաջադրանքն է ամբողջ աշխարհում: Իսկապես, յուրաքանչյուր մարդ, մեծահասակ, երեխա, թե երիտասարդ մնում է ազատ մարդ, ով կարող է Հիսուսին կողմ կամ դեմ

որոշում կայացնել: Մենք չենք ուզում և չենք կարող որևէ մեկին ստիպել, դա չի համապատասխանում Աստծո կամքին: Բայց մենք չենք ուզում անտարբեր լինել ու ասել. ժամանակն ու հարաբերությունները են այդպիսին: Հարաբերություններն ու ժամանակի երևույթները մեզ համար արդարանալու և ոչ մի ձևով մեր պատասխանատվությունը քչացնելու պատճառ չեն:

Դրա համար շատ կարևոր է, որ մենք նախ մեր հավատն ամրացնենք Սուրբ կնունքի նկատմամբ և աշխատենք դրա վրա: Այո, մենք ունենք Սուրբ Հոգու շնորհները: Այդ շնորհներով ես կարող եմ ասել. ,, Աբբա, սիրելի Հայր, ես վստահում եմ քեզ,,: Նախատում են ինձ, օրհնում եմ ես, հալածում են ինձ, համբերում եմ ես: Այո, ես ուզում եմ ավելի շատ սիրել և ես կարող եմ: Այո, ես ուզում եմ ապագայի համար ուրախանալ, ես ուզում եմ գործիք լինել Աստծո ձեռքին: Եթե դա մեզ մոտ տեսնել կարողանան, եթե մենք դա նախապես ապրենք, ապա կարող ենք օգնել, որ երեխաների, երիտասարդների հավատը իրենց կնունքի նկատմամբ ուժեղանա: Հետո նրանք կարող են ավելի շատ Սուրբ Հոգու շնորհների ազդեցությունն ապրել:

Շրջանային առաքյալի քարոզից հետո գլխավոր առաքյալն ասաց .մենք ուզում ենք անցնել Սուրբ Ընթրիքի տոնակատարությանը, մեզ նախապատրաստելուն և կենտրոնանալուն: Այստեղ խոսքը որևէ մեկին վատ վիճակի մեջ գցելու մասին չէ: Ես սոսկ հարց եմ տալիս. Ի՞նչ ես դու արել Սուրբ Հոգու շնորհներով, կարողացել են այդ շնորհները լիովին ծավալվել: -Սիրելի Աստված, ես կարող էի ավելի լավ անել, ինձ ողորմածություն նվիրիր, նոր սկզբի հնարավորություն նվիրիր:

Ես վստահ եմ, ով Տիրոջ առաջ այսպես հանդես գա, կապրի այդ ողորմածությունը և նոր սկիզբը: Սուրբ Ընթրիքը ևս մի տոն է շնորհակալության: Եկեք այսօր այդ շնորհակալությունն Աստծուն, Սուրբ Հոգուն ուղղենք: Սուրբ Հոգուն պատկերացնելը դժվար է: Հորը կարող ենք ավելի հեշտ պատկերացնել: Արարիչը շատ կոնկրետ և հայրական կերպար է, հեշտ է պատկերացնել: Աստծո Որդին շատ կոնկրետ Հիսուս Քրիստոսն է: Նրանից մենք կարող ենք շատ լավ պատկեր ստեղծել: Սակայն ի՞նչ պետք է մենք պատկերացնենք Սուրբ Հոգու ներքո: Մենք միշտ կարիք ունենք պատկերների:

Մենք Աստծուն ճանաչում ենք իր գործերով: Եվ Սուրբ Հոգու ազդեցությունը ևս կարող ենք ճանաչել: Առանց Սուրբ Հոգի Աստծո մենք կարող ենք միայն զեկուցումներ լսել, բայց ոչ՝ Աստծո խոսքը: Դա մեզ համար արդեն պարզ է: Ի՞նչ կլինեինք մենք, եթե միայն զեկուցումներ և քարոզներ լսեինք, և ոչ Աստծո խոսքը: Առանց Սուրբ Հոգու ներգործության մենք կարող ենք տոնել Սուրբ Ընթրիքը, բայց դա չի լինի Քրիստոսի մարմինն ու արյունը, դա միայն հիշատակի տոն կլինի: Բայց, քանի որ Սուրբ Հոգի Աստվածն է ներգործում, մենք կարողանում ենք Հաղորդությունը տոնել և Հիսուս Քրիստոսի հետ միասնություն կազմել: Քանի որ մենք ունենք Սուրբ Հոգու շնորհները, Սուրբ Հոգին կարող է մեզնից նոր արարած ստեղծել: Նա կարող է մեզ մի վիճակի մեջ փոխադրել, որը կտանի Աստծո հետ հավերժ միասնության: Անգամ, եթե մենք չենք կարողանում մեզ համար պատկեր ստեղծել, ամբողջ սրտով շնորհակալ ենք Սուրբ Հոգու ներգործության համար:

Եկեք միասին դեպի Աստված գնանք մի ցանկությամբ՝ Տեր , ես ցանկանում եմ ավելի շատ աջակցել, որ նաև իմ մերձավորը Հիսուս Քրիստոսին սիրի: Տեր, օգնիր ինձ աջակցելու, որ նաև հաջորդ սերունդը Սուրբ Հոգու ներգործությունը ճանաչել և ապրել կարողանա: Ես չունեմ ոչ մի ստրատեգիա, շրջանային առաքյալը ևս, թե ինչ պետք է անել, որ երիտասարդները, ովքեր կոնֆիրմացիա են ընդունել, հավատարիմ մնան: Մարդկային տեսանկյունից ելնելով էլ չենք կարող դա պլանավորել: Դա կարող է միայն Աստված, նա կարող է ազդել, որ մարդիկ հավատքի գան և հավատարիմ մնան:

Եթե մենք բոլորս, այն մեծ շրջանակով, ցանկություն ունենանք ու ասենք՝ սիրելի Աստված, օգնիր մեզ, մենք պետք է անենք այն, ինչ կարող ենք, որպեսզի նաև հաջորդ սերունդը պահպանի այն, ինչ դու տվել ես նրան, չի կարող Աստված դրա կողքով անցնել և ուշադրություն չդարձնել: Աստված մեզ կօգնի: Եկեք դրա համար կամք ցուցաբերենք:

## Հիմնական մտքեր

Մենք հավատում ենք մեր Աստծո զավակ լինելուն: Սուրբ Հոգու շնորհների ազդեցությունը մեր մեջ ճանաչելի է՝

- Աստծուն մեր վստահելով,
- Մեր հոգևոր հավասարակշռությամբ,
- Մեր լեզվով և
- Մեր կարեկցությամբ:

# Նորություն Հայաստանից

## Առաքյալ Վիլհելմ Հոյերի այցը Հայաստան

Օգոստոսի 15-ից 18-ը առաքյալ Վիլհելմ Հոյերը Հայաստանում էր: Այցի առաջին օրը նա ժամերգություն անցկացրեց Կաճաճկուտի համայնքում: Այս անգամ ևս առաքյալը գոհ էր քույր-եղբայրների ուշադրությունից: Բոլորը տոնականորեն կատարեցին Սուրբ Հաղորդության խորհուրդը: Հաջորդ օրը, Վանաձոր քաղաքում տեղի ունեցավ սեմինար, որին մասնակցում էին Հայաստանի նորառաքելական բոլոր համայնքների սպասավոր եղբայրներն ու ուսուցչական անձնակազմը:: Սեմինարը ինտերակտիվ էր, ծառայող բոլոր եղբայրներն ու ուսուցիչները ակտիվ մասնակցում էին քննարկումներին: Առաքյալը ներկաներին հարցեր էր առաջադրում Նորառաքելական եկեղեցու հավատամքի վերաբերյալ և բոլորը ճիշտ պատասխանում էին այդ հարցերին: Դա առաքյալին շատ էր ուրախացնում: Ապա, նա մեկ անգամ ևս պարզաբանեց սարկավագի պաշտոնի առաջադրանքը, որ նա ևս միշտ պետք է պատրաստ լինի անհրաժեշտության դեպքում զոհասեղանից աստվածաշնչյան խոսքը քարոզելուն:

Նույն օրը առաքյալը ժամերգություն անցկացրեց Վանաձորի համայնքում, որի ժամանակ ներկա էին նաև Ստեփանավանի համայնքի քույր-եղբայրները: Առաքյալ Հոյերի այցը կարճ էր, բայց կարողացավ Հայաստանի բոլոր համայնքների քույր-եղբայրներին ծառայել: Առաքյալը ժամերգություններ անցկացրեց նաև Օձունում, Գյումրիում և Երևանում, որոնց ժամանակ ներկա էին հարակից համայնքների անդամները: Նա բոլոր քույր- եղբայրներին տեղեկություն տվեց շրջանային առաքյալ Ռայներ Շթորքի ժամերգության նպատակով 2018-ին Հայաստան կատարելիք այցի մասին և բոլորին սրտանց հրավիրեց այդ տոնական ժամերգությանը: Այցի ընթացքում առաքյալին ուղեկցում էր նրա կին Էլիզաբեթ Հոյերը: Նա ևս շատ գոհ էր նպատակային այցի հաջող կայացման համար:

Սպասավոր եղբայրների և ուսուցչական անձնակազմի հետ սեմինարի ընթացքում:

Լուսանկարը՝ Հայաստանի ՆԱԵ

# ԿՈՐԱԾ ԴՐԱՄՆԵՐԸ

/ՂՈՒԿԱՍ 15,8-10/

Օրենսգետները բարկանում էին Հիսուսի վրա, քանի որ նա հարաբերվում էր մաքսավորների և այլ մեղավորների հետ: Նա նույնիսկ ուտում էր նրանց հետ, թեև հրեական օրենքի համաձայն՝ նրանք պիղծ էին: Օրենսգետների նախատինքներին արձագանքելով՝ նա մի քանի առակ է պատմում: Դրանցից մեկը ,,Կորած դրամի,, առակն է:

,, Մի կին տասը դրամ ուներ և դրանից մեկը կորցնում է: Դրա համար նա շատ է տխրում: Ի՞նչ պետք է նա անի,,:- Օրենսգետները լարված լսում էին :-Հիսուսը շարունակեց .,,Ճրագի չի վառի և չի ավլի տունը ու չի փնտրի, մինչև որ գտնի,,: Ունկնդիրները գլուխները կախեցին: Նրանք էլ նույնը կանեին:

Սակայն պատմությունը շարունակվում է:

,, Եվ երբ կինը գտնի, կկանչի բարեկամներին և հարևաններին ու կասի.,, Ուրախացեք ինձ հետ, որովհետև գտա իմ կորցրած դրամը,,:
Հիսուսն ասաց օրենսգետներին.,, Նմանապես ուրախանում են հրեշտակները, երբ մի մեղավոր զղջում է,,:

Մետաղադրամներ կային Պաղեստինում Քրիստոսից առաջ 18-րդ դարում: Նրանց արժեքը կախված էր կշռից և նյութից: Ամրագրված արժեքներով դրոշմված մետաղադրամներ կային միայն Քրիստոսից առաջ 6-րդ դարից սկսած : Հիսուսի ժամանակ Իսրայելում կարելի էր թվարկել երեք տարբեր փոխարժեքներ: Քանի որ Պաղեստինը պատկանում էր Հռոմեական կայսրությանը, այնտեղ կային հռոմեական մետաղադրամներ, օրինակ՝ դինարը: Դա կայսրի փողն էր, ով պատկերված էր մետաղադրամի վրա: Բայց, քանի որ Պաղեստինը Սիրիայի մարզ էր, կար նաև, այսպես կոչված, նահանգային փող, ինչպես՝ հունական դրահման և տիրանական շեթաթերը: Այս փոխարժեքով էր վճարվում տաճարի հարկը: Միակ հրեական մետաղադրամը, որը նշվում է Նոր կտակարանում, լեփթոնն է/ թարգմ.՝ դրամ/, այն ամենափոքր փոխարժեքային միավորն է:

Գիտե՞ք, որ մենք սեփական եթովպական օրացույց ունենք: Մեզ մոտ տարին 13 ամիս ունի :

# ՍԱՐՈՆԻ ՄՈՏ՝ ԴԻՐԵ ԴԱՎԱՅՈՒՄ / ԵԹՈՎՊԻԱ /

Իմ անունը Սարոն է, ես տասնմեկ տարեկան եմ և ապրում եմ Դիրե Դավա քաղաքում: Այն Եթովպիայի մայրաքաղաքից մոտ 500 կիլոմետր հեռու է, ավտոբուսով ընթացքը տևում է մոտ տասը ժամ :

Երկու քաղաքն էլ գտնվում են գրեթե նույն գծի վրա, Դիրե Դավան երկրի քարտեզի վրա մի քիչ դեպի աջ՝ ծովի ուղղությամբ է ընկած, Սոմալիի սահմանի մոտ: Իմ ընտանիքի հետ ես ապրում եմ մի փոքրիկ տան մեջ, որը մենք վարձել ենք:

Եթովպիան Լեսոտոյի հետ միասին ամենաբարձրադիր երկիրն է Աֆրիկայում: Երկրի ավելի քան կեսը ընկած է 1200 մետր բարձրության վրա: Եթե դաշտավայրերում շոգ և չորային է լինում, կարող է այդ նույն ժամանակ սարերում ձյուն տեղալ: Հյուսիսում Սիմիեն կոչվող լեռնախումբը ազգային պուրակ է, որտեղ կարելի է, օրինակ, ընձառյուծներ, կապիկներ և բորենիներ տեսնել: Ես կենդանիներ շատ եմ սիրում, և ես սիրում եմ իմ երկիրը և այն մարդկանց, ովքեր ապրում են այստեղ: Որպեսզի տեղեկացված լինեմ, ամեն օր հետևում եմ լուրերին և կարդում եմ օրվա լրագիրը: Ես գիտեմ Եթովպիայի պատմությունը և հետաքրքրվում եմ, թե ապագայում ինչպես է զարգանալու իմ երկիրը:

Այս լուսանկարը արվել է իմ դպրոցում: Այստեղ իմ ոչ բոլոր համադասարանցիներն են, քանի որ իմ դասարանում կա շուրջ 45 աշակերտ: Ես հաճախում եմ վեցերորդ դասարան, սովորելն ինձ համար հեշտ է: Դպրոց հասնելու համար գնում եմ երեք կիլոմետր: Եթովպիայում շատ աշակերտներ ավելի երկար ճանապարհ են անցնում դպրոց հասնելու համար, հենց բարձրավանդակում: Երևի դրանից է, որ իմ երկրից երկարությունը հաղթող մի քանի լավ վազորդներ են հանդես եկել - շուրջ 53 օլիմպիական շքանշաններ են նվաճել:

Գուցե դա նաև առողջ սննդի արդյունք է: Բոլոր դեպքերում, ես միշտ կարող եմ ուտել սպագետտի՝ մսի սոուսով և մրգով:

Խաղալու համար ես հանդիպում եմ մեր տանը մոտիկ գտնվող ընկերների հետ: Ես հաճույքով եմ խաղում ֆուտբոլ, բայց նաև՝ համակարգչային խաղեր: Իմ լավագույն ընկերուհու անունը Մահադեր է:Նա խելացի է և շատ ընկերական, նա շատ հանգիստ է, բայց շատ է ժպտում: Ինչպես ես, նա էլ է հաճախում վեցերորդ դասարան:

Երաժշտությունն ինձ դուր է գալիս, նոր երգերը արագ եմ սովորում: Ամենից շատ սիրում եմ մեր եկեղեցական երգերը: Այստեղ դուք տեսնում եք ինձ՝ եկեղեցու երգչախմբի երկու ընկերուհիների մեջտեղում; Ես հաճույքով կուզենայի ևս մի գործիք նվագել սովորել, օրինակ, երգեհոն:

Իմ ընտանիքը՝ իմ հայրիկի անունը Գիրմա է, նա 40 տարեկան է: Նա մեր համայնքում ծառայում է որպես ավետարանիչ և առաջնորդ: Իմ մայրիկի անունը Քիդիսթ է, նա զբաղվում է առևտրով: Քանի որ ես ընտանիքի միակ զավակն եմ, իմ ընտանիքը առանձնահատուկ ուշադիր է իմ նկատմամբ և ինձ միշտ օգնում է, երբ ես նրա հովանավորության կարիքն եմ ունենում: Ես երջանիկ եմ իմ ծնողներին ունենալու համար: Թող Աստված նրանց օրհնի, առողջություն և երկար կյանք նվիրի:



Այլյուրը՝ ամագիր՝ ,,Մենք՝ երեխաներս,,; հրատարակություն 07/2017; լուսանկարները՝ Fotolia.com: Wollwerth Imagery, alekosa, Adrian, simoneemanphoto, wiw, Բերնդ Յուրգենս, մասնակիր

Photo: Oliver Rütten

# Ճշմարիտ մխիթարությունը՝ Հավատ՝ նշանների փոխարեն

Ննջեցյալների գոյությունը պատկանում է նորառաքելական հավատի հարստություններին: Գլխավոր առաքյալ Ժան- Լյուք Շնայդերը դրանում ոչ մի կասկած չունի: Բոլոր դեպքերում, նա կոչ է անում՝ դրան զգույշ և ողջախոհ վերաբերել:

,, Վերջերս ես շատ անակնկալի եկա, երբ կարդացի, որ ավելի շատ քրիստոնյաներ են հաստատում իրենց հավատը Հիսուս Քրիստոսի նկատմամբ, բայց անդրշիրիմյան աշխարհի նկատմամբ՝ ոչ: Շատերը կարծում են, որ հաղորդության ընդունումը կախված է մարմնի առկայությունից, նրանց տեսակետի համաձայն՝ մարմնից անջատված հոգին դեռ կարող է սպասել մեռելների հարությանը: Վերջին դատաստանի ժամանակ հարություն առած մեռելները ինչքանով որ Աստծուց ընդունված կլինեն, կարող են նրա թագավորությունը գնալ:

Մենք հավատում ենք, որ մարդը իր մարմնական մահից հետո էլ շարունակում է ապրել. նրա հոգին և ոգին չեն մահանում, նրա անհատականությունը շարունակում է ապրել: Անդրշիրիմյան աշխարհում մարդը կարող է Աստծուն կողմ կամ հակառակ որոշում կայացնել: Նմանատիպ որոշման ազատությունը հնարավորություն է տալիս նրան՝ անգամ երբ նրա մարմինը այլևս չկա, ընդունելու սուրբ խորհուրդները:

Միայն Աստված է ճանաչում այն հոգիներին, որոնք հավատունենսուրբարարողություններնընդունելու: Այդ հոգիները ննջեցյալների ժամերգությունների ընթացքում կամ մկրտվում են կամ Սուրբ Հոգով կնքվում: Մեր աղոթքներով մենք չենք կարող նրանց փրկել, դա կարող է անել միայն Հիսուսը, սակայն մենք կարող ենք նրանց մեր սերը ցույց տալ: Մեր աղոթքները կլինեն բարեխոսություններ Աստծուն, ով էլ նրանց կհրավիրի:

Ննջեցյալների գոյության կապակցությամբ մենք պետք է զգույշ և ողջախոհ լինենք: Հավատքի քույր-եղբայրները հաճախ են պատմում երազների և դեմքերի մասին, որոնք վերաբերում են անդրշիրիմյան աշխարհին: Այդ երևույթները կապված են նրանց ապրումների հետ, և չի կարելի դրանք ընդհանրացնել: Դրանք ոչ մի դեպքում չեն կարող անձեռնմխելի ճշմարտության մակարդակի բարձրանալ: Մի օրինակ այս առումով. վերջերս տարբեր նահանգներից երկու անձ ինձ պատմեցին, որ նրանք տեսել էին նույն ծանոթ մահացած անձնավորությանը: Այդ անձնավորությունը առաջինին վկայել էր իր ուրախությունը իր փրկված լինելու համար, իսկ երկրորդին մի քանի շաբաթ հետո ասել էր, որ նա պարտադիր օգնության կարիք ունի: Ու՞մ պետք է հավատալ:

Ես կարող եմ հասկանալ, որ թե մեկը, թե մյուսը՝ խոսելով այդ ննջեցյալների ճակատագրի մասին, որոնք իրեն մոտիկ են, կցանկանար հանգստացնել նրան, այնուամենայնիվ, ես այն կարծիքին չեմ, որ ,,նշանները,, մխիթարության լավագույն աղբյուրներն են: Ճշմարիտ մխիթարությունը գալիս է Աստծո սիրո հանդեպ հավատից և այն վստահությունից, որը բխում է դրանից: Մեր առաջադրանքն է՝ քննվածների տառապանքը կիսելը, նրանց հետ աղոթելը, նրանց հավատը և Աստծուն վստահելը ուժեղացնելը:

# Ննջեցյալներ գոյությունը - գլխավոր հիմքերը

Նորառաքելական հավատը մահացածների վերաբերյալ տարբերվում է մյուս քրիստոնյաներից: Որտեղի՞ց է դա գալիս: Ինչպե՞ս է դա հիմնավորվում: - Բացատրություններ ննջեցյալների գոյության մասին ուսմունքից:

,,Ննջեցյալների գոյությունը,, վերաբերում է բոլոր այն երևույթներին, որոնք կապված են մահացածների հետ: Նեղ իմաստով, մեր պրակտիկան ցույց է տալիս, որ մենք ոչ միայն աղոթում ենք մահացածների համար, այլ նաև՝ առաքյալների միջոցով նրանց են նվիրաբերվում սուրբ խորհուրդները: Դրա համար հիմական նախապայմանը, ամենից առաջ, մահից հետո կյանքի գոյության հանդեպ հավատն է: Հոգու անմահությունը մեր հավատի հիմական դրույթին է պատկանում:

Դրանից բացի, այդ դրույթին է պատկանում այն պատկերացումը, որ անդրշիրիմյան աշխարհում հոգիների վիճակը հիմնովին փոփոխելի է, այսինքն՝ մարմնական մահից հետո էլ կարող են հասնել փրկության: Այս հավաստիությունը բխում է Ավետարանի խոսքից, ըստ որի՝ մարդու հետ Աստծո հարաբերությունը մահով չի ընդհատվում: Դավանաբանությունն այս առումով նշում է.,, Նորառաքելական քրիստոնյաները բարեխոսությամբ են հանդես գալիս ննջեցյալների

համար, նրանք խնդրում են Տիրոջը, որ նա օգնի այն հոգիներին, որոնք առանց փրկվելու են գնացել անդրշիրիմյան աշխարհ,,/ Հատված 9.6.1/ :

## Չմկրտված երեխայի մահը

Մահացածներին փոխարինող ողջերին սուրբ խորհուրդները նվիրաբերելու պրակտիկային առաջինը դիմել է առաքյալ Ֆրիդրիշ Վիլհելմ Շվարցը / 1815-1895/: Դրա համար հիմք հանդիսացավ մի կոնկրետ դեպք այն ժամանակվա Ամստերդամյան համայնքում: 1872-ին մի երեխա առանց մկրտվելու մահացել էր կամ մահացած էր ծնվել, ծնողները անհանգստանում էին իրենց երեխայի փրկության համար: Մտածում էին, թե ինչպես կարելի է մահացած երեխային սուրբ խորհուրդները նվիրաբերել: Առաքյալ Շվարցը այս հարցի առումով երկար ժամանակ ուսումնասիրում էր 1. Կորնթացիների 15,29- ում գտնվող խոսքերը: Այս դեպքի հետ կապված, այսպես է հետագայում հաղորդվում, նրան պարզ է դառնում կորնթացիրներին գրված նամակի այդ խորհրդավոր տողերը:

1.1կորնթացիների 15,29-ում նշվում է աստվածանչյան հիմնավորումներից մեկը մահացածին մկրտության և Սուրբ Հոգով կնունքի նվիրաբերման մասին: 19-րդ դարի 80-ական թվականների սկզբին նաև Սուրբ Հաղորդությունն է նվիրաբերվել մահացածներին:

Ով մահացածին պետք է մկրտեր կամ կնքեր, նախ ծանոթացվում էր մարգարեական նշաններով և տեսիլքով: Մինչև 20-րդ դարի 20-ական թվականները մկրտվում և կնքվում էին միայն անվանապես նշվող մահացածները:

Դրանից հետո այդ սովորությունը դադարեցվեց, քանի որ ոչ ոք չգիտեր, թե անդրշիրիմյան աշխարհի որ հոգին է Աստծո կողմից մկրտության և կնունքի համար ընդունվում:

Սկզբնական շրջանում ննջեցյալների համար ժամերգությունները անց էին կացվում Սուրբ Ծննդյան երկրորդ օրը: Գլխավոր առաքյալ Բիշոֆը 1954-ին որոշում կայացրեց, որ Սուրբ Ընթրիքը ննջեցյալներին հասանելի դառնա կիրակի օրերին: Դրանից ելնելով էլ՝ 1954-ից սկսած, տարվա ընթացքում երեք անգամ անց են կացվում ժամերգություններ, որոնց ժամանակ ննջեցյալներին նվիրաբերվում է նաև մկրտություն և կնունք:

## Վկայություններ Սուրբ գրքում

Քանի որ մեր հավատը մահացածների վերաբերյալ տարբերվում է այլ քրիստոնյաներից, անհրաժեշտություն է առաջանում այն լրացուցիչ բացատրելու:

Նախ հարցնում ենք, թե մահացածներին խորհուրդները նվիրաբերելու մասին ինչ վկայություններ կան Նոր կտակարանում:

Պողոս առաքյալի կորնթացիներին գրած 1-ին նամակում տեղեկացվում է մահացածներին մկրտել տալու առկա սովորության մասին: Պողոսը խոսում է այս պրակտիկայի մասին՝ հարությունը ժխտողներին հակադրվելով: Ըստ նրա՝ խոսքը մահացածների համար խորհուրդների ընդունման արդարացման մասին չէ: Բոլոր դեպքերում, այս առումով երևում է, որ ունեցել են լիովին սովորույթային և դրանից ելնելով այլևս ոչ խնդրահարույց պրակտիկա: Պողոսը գրում է / 1-ին կորնթացիներին 15,29/ . ,, Ի՞նչ պիտի անեն նրանք, որ մկրտվեցին մեռելների համար, եթե, արդարև, մեռելները հարություն չեն առնում, ինչու՞ ուրեմն մկրտվում են նրանց համար,,:

Կորնթացիներին ուղղված նամակը, որը գրված պետք է լիներ Ք.հ. 54-ին, ամենավաղ վկայությունն է այս սովորության: Երկրորդը ժամանակային առումով ավելի ուշ է կարգավորվել, գտնվում է Պետրոսի 1-ին նամակում, որը հրատարակվել է Ք. հ. 90-ին: Պետրոսի 1-ին նամակի 3,19-ում ապացույց չկա մահացածների կողմից խորհուրդներն ընդունելու մասին, այլ՝ այնտեղ ակնարկվում է խաչվելուց հետո Քրիստոսի ,, մահվան թագավորություն,, իջնելը, ինչպես առաքելականում է գրվում. ,, Որով և նա գնաց քարոզեց բանտում եղած այն հոգիներին, որոնք մի ժամանակ ապստամբել էին, երբ Աստծու համբերությունը երկարաձգվում էր նրանց համար մինչև Նոյի օրերը, երբ տապանն էր շինում: Այդ օրերին քչերը, այսինքն՝ ութ հոգի փրկվեցին ջրից,,: Նույն կապակցությունը կրկին նշվում է Պետրոսի 1-ին նամակի 4,6-ում, երբ գրվում է հետևյալը՝ ,, քանի որ սրա համար քարոզվեց Ավետարանը նաև մեռելներին,,:

Կորնթացիներին գրված 1-ին նամակում նշվածը ամենից առաջ բազմակողմանի մտածելու տեղիք է տալիս: Աստվածաշնչի մի քանի մեկնաբաններ ընդունում են, որ մահացածների մկրտությունը խոսում է այն պրակտիկայի մասին, որը քրիստոնեական համայնքներից դուրս կատարվում էր: Մեկ այլ նոր մեկնաբանություն կորնթացիների 1-ին նամակի վերաբերյալ այլ արժեքավորում ունի և հաստատում է, որ ,, մեռելների մկրտությունը կորինթական համայնքներում / հավանաբար այլ, անգամ պողոսական համայնքներում/ ինքնին հասկանալի պրակտիկա էր, որ որպես այդպիսին նաև հարությունը ժխտող խմբի կողմից էլ էր կատարվում:

Հետառաքելական շրջանում եկեղեցին մահացածների փոխարեն ողջերի միջոցով

Լուսանկարը՝ Դանիել Ռուրդֆի

## ,,Հիսուս Քրիստոսը Տերն է ողջերի և մեռելների, նրա Ավետարանը հավասարապես երկուսին էլ վերաբերում է,,:

խորհուրդների նվիրաբերման հանդեպ մերժողական դիրք էր գրավում և 397 թվականին Կարթագենի 3-րդ եկեղեցական ժողովում մեռելների մկրտությունն արգելեց:

### Կրկին ընդունումը և զարգացումը

Մինչ կաթոլիկ-առաքելական համայնքների առաքյալները հին եկեղեցու ավանդույթներով և կաթոլիկ-օրթոդոքս եկեղեցիների մահացածների համար սոսկ բարեխոսության սովորության վրա էին կողմնորոշվում, դրանից դուրս, 1863 թվականից ձևավորված նոր առաքելական ուղղության առաքյալները էական քայլեր էին կատարում: Նրանք նախ անդրադարձան նշված նոր կտակարանային հավելվածներին, որոնք , եթե հենց հիշեն վերը մեջբերված մեկնությունները, միանգամայն կոչ էին անում կրկին ընդունելու և զարգացնելու: Դա տեղի ունեցավ վերջին 140 տարիներին:

Ննջեցյալների գոյության համար գլխավորը միայն հավատն է Աստծո ընդհանրական փրկության պլանի հանդեպ, որը հավասարապես վերաբերում է և ողջերին, և մահացածներին: Նորառաքելական դավանաբանությունը / հատված 9,6,3/ շատ հստակ խոսում է դրա մասին. ,, Հիսուս Քրիստոսը Տերն է ողջերի և մահացածների, նրա Ավետարանը հավասարապես երկուսի համար է: Աստծո կամքն է, որ բոլոր մարդիկ օգնություն ստանան / 1-ին Տիմոթեոս 2,4-6; Հովհաննես 3,16/, սա նշանակում է, որ Աստծո փրկության պլանը ընդհանրական է: Փրկությունը տեղի է ունենում քարոզով, մեղքերի քավությամբ և խորհուրդներով: Այդ ամենը նաև ննջեցյալների համար է: Նրանց համար էլ, ինչպես ողջերի, կարևոր է, որ Հիսուս Քրիստոսին հավատալը փրկության անհրաժեշտ պահանջ լինի: Փրկությունը տեղի է ունենում միայն Հիսուս Քրիստոսի միջոցով,,:

Խմբագրական
Հրատարակիչ՝ Ժան-Ցլուք Շնայդեր, Իուբերլանդշթրասսե 243, 8051 Ցյուրիխ/ Շվեյցարիա
Ֆրիդրիշ Բիշով հրատարակչություն ՓԲԸ, Ֆրանկֆուրթեր շթր. 233, 63263 Նոյ- Իզենբուրգ/ Գերմանիա
Խմբագիր՝ Փեթեր Յոհաննինգ

Լուսանկարը՝ Ջեմային Մարուարի

# Գնալ ժամերգության երեք անիվով

Երբ Ֆլորիան Քադերաոն եկեղեցի է գնում, փողոցով ամենաշատը երեք անիվ է անցնում, ոչ նրա համար, որ նա արագ է գնում, այլ նրա համար, որ նրա մեքենան դրանից ավել անիվներ չունի: Դա դուր է գալիս նրա ուղևորներին:

Բոհոլը տարածքով տասներորդ մեծ կղզին է Ֆիլիպիններում, թեև այստեղ 100 միլիոն բնակչից միայն 1 միլիոն ֆիլիպինցի է ապրում: Բնակչության 90 տոկոսը ունի քրիստոնեական հավատք, մի քանիսը Հարավային Ասիայի Նորառաքելական եկեղեցու անդամ են : Նրանք խոսում են բոհոլանո լեզվով, սեբուանոյի բարբառով և նաև մեկ-մեկ անգլերենով և տագալոգով:

Ֆլորիան Քադերաոն իր կնոջ և երկու երեխաների հետ ապրում է կղզու նահանգային մայրաքաղաքում՝ Թագբիլարան Սիթիում: Նա համանուն համայնքի առաջնորդն է և ավետարանիչը: Ժամերգության գալիս և գնալիս 48-ամյա այդ տղամարդը ճանապարհ է ընկնում իր եռանիվով:

## Երեք անիվով դեպի եկեղեցի

Ինդոնեզական քաղաքներում ամենասիված տրանսպորտի միջոցը, իսկ ամենից առաջ գյուղական շրջաններում՝ շարժիչով եռանիվն է՝ ավտոյի մի տեսակ: Այդ, պարզապես ,,եռանիվ,, կոչվածը, պատկանում է ֆիլիպինյան փողոցային երթևեկությանը, ինչպես այլ վայրերի համար ավտոմեքենաներն են, գծային ավտոբուսները և տրամվայները:

## Հասարակական արագացված աշխատանք

Եռանիվը հեռվից էլ նկատելի է: Այն ներկված է վառ դեղին գույնով, իսկ առջևի կցորդի վրա մեծ չափերով փայլում է Նորառաքելական եկեղեցու խորհրդանշանը: Սև գույնի խորհրդանշանի վրա կարմիրով գրված է 2015-ի նշանաբանը՝ ,, Ուրախություն Քրիստոսով,,: Իսկ դիմապակու վերևում, առջևի ծածկի վրա, մեծ տառերով գրված է՝ ,,Աստծո ծառայող,,:

## Գնացեք և ուսուցանեք նրանց

Համայնքի առաջնորդը ներկման այդ դիզայնը պատվիրել է մի նկարչի: Նա հպարտությամբ է հայտարարում.,, Ես միակն եմ, ում եռանիվը այսպիսի գույնով է լաքապատված,,: Եվ դա նկատում են նաև հարևաններն ու ծանոթները: Շատերն են խոսում նրա վառ դեղին եռանիվի մասին: Ավետարանչի համար դա մեծ հնարավորություն է իր հավատի և եկեղեցու մասին տեղեկացնելու: Եվ նա դա անում է ուրախությամբ Քրիստոսով: Թե նա արդյոք այդ պատճառով երբեմն ուշացած է ժամերգության գնացել, հայտնի չէ:

Եռանիվների շատ տարատեսակներ կհանդիպեք ճանապարհին, առանց կցորդի կամ կցորդով՝ այլ ուղևորների հետ միասին, առանց ծածկի կամ անձրևապաշտպան ծածկոցի: Որպես տրանսպորտի միջոց՝ այս փոխադրամիջոցը ունի մինչև ինը նստատեղ, տեսակի ձևից է կախված ուղևորների նստելու կամ կանգնելու հնարավորությունը:

## Ոչ տաքսի, սակայն բազմաթիվ ուղևորներ

Նման մի եռանիվ է օգտագործում նաև ավետարանիչ Քադերառոն եկեղեցի գնալիս: Սկզբում նրա եռանիվը տեղավորում էր իրեն և իր ընտանիքին: Սակայն նա հաճախ էր իր հետ եկեղեցի տանում նաև համայնքի այլ անդամների: Ֆլորիան Քադերառոն եռանիվը գնել էր հատուկ եկեղեցի գնալու համար՝ իր կին Աուրեայի /45/, իր դուստր Գվինեթի /13/, իր որդի Գվիլիեմի /8/ և իր համար: Այլ մարդկանց տեղափոխելու և փող վաստակելու մասին նա չէր մտածում, և այդպես է մինչև այսօր:

Ավետարանիչ Ֆլորիան Քադերառոն իր ընտանիքի հետ ապրում է Ֆիլիպիններում: Ժամերգության նա գնում է իր վառ դեղին եռանիվով: Նա հաճույքով է իր հետ տանում քույր եղբայրներին:

# Նախատեսում

| | |
|---|---|
| 01.10.2017 | Պորտ Մորեսբի (Պապուա- Նոր Գվինեա) |
| 15.10.2017 | Քեյփթաուն (Հարավային Աֆրիկա) |
| 17.10.2017 | Ջեորջ (Հարավային Աֆրիկա) |
| 22.10.2017 | Նյուրնբերգ (Գերմանիա) |
| 29.10.2017 | Դուբլին (Իռլանդիա) |
| 05.11.2017 | Լանդաու (Գերմանիա) |
| 12.11.2017 | Ռայպուր (Հնդկաստան) |
| 19.11.2017 | Բաքնանգ (Գերմանիա) |
| 26.11.2017 | Էսսեն (Գերմանիա) |
| 03.12.2017 | Լյուբեք (Գերմանիա) |
| 08.12.2017 | Կինշասա (Կոնգոյի ԴՀ) |
| 09.12.2017 | Գեմենա (Կոնգոյի ԴՀ) |
| 10.12.2017 | Կինշասա (Կոնգոյի ԴՀ) |
| 17.12.2017 | Լեուվարդեն (Նիդեռլանդներ) |

New Apostolic Church
International